Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2022 թվականի հունիսի 28-ից հուլիսի 1-ը

Շվեյցարիայի Համադաշնություն (ք. Ցյուրիխ) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Աշոտ Մուրադյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Շվեյցարիայի Համադաշնություն, ք. Ցյուրիխ, հունիսի 28-ից հուլիսի 1-ը

4. Հրավիրող կողմը՝

Հարկային մարմինների ներեվրոպական կազմակերպություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Հարկային մարմինների ներեվրոպական կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) 26-րդ ասամբլեայի ընթացքում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի պատվիրակությունը ներկա է գտնվել ադմինիստրատիվ և տեխնիկական նիստերին, որոնց ընթացքում անդրադարձ է կատարվել ինչպես Կազմակերպության առջև ծառացած ներկայիս խնդիրներին և դրանց հնարավոր լուծումներին, այնպես էլ Կազմակերպության 2023-2027թթ. ռազմավարությանը, 2023թ.-ի աշխատանքային ծրագրին և բյուջեի հաստատմանը: Նիստերին չմասնակցելու դեպքում հնարավորություն չէր ընձեռնվի համագործակցել Հարկային մարմինների ներեվրոպական կազմակերպության անդամ պետությունների հետ, մասնակցել քննարկումներին և քվեարկել:

6. Քննարկված թեմաները՝

Քննարկվել են Կազմակերպության 2021թ.-ի գործողությունների և ֆինանսական հաշվետվությունները, ներքին աուդիտորների զեկույցը, 2018-2022թթ. ռազմավարության

իրականացման զեկույցը, 2023-2027թթ. ռազմավարության նախագիծը: Քննարկվել և հաստատվել է նաև Կազմակերպության կանոնադրության մեջ համապատասխան փոփոխությունների փաթեթը, որի շրջանակներում քննարկվել է նաև Կազմակերպության անդամ երկրների անդամավճարների հարցը և որոշվել վերանայել անդամավճարները՝ ինֆլացիային համապատասխան: Ադմինիստրատիվ նիստի ընթացքում ընտրվել է 2022/2023 թթ. վարչական խորհուրդը, որը կազմված է Ավստրիայի, Իտալիայի, Լիտվայի, Նորվեգիայի, Լեհաստանի, Պորտուգալիայի, Սլովենիայի և Միացյալ Թագավորության ներկայացուցիչներից:

Ադմինիստրատիվ նիստի ժամանակ Հարկային մարմինների ներեվրոպական կազմակերպության անդամ երկրները հաստատել են Իսլանդիայի հարկային մարմնի դիմումը Հարկային մարմինների ներեվրոպական կազմակերպությանը անդամակցելու վերաբերյալ:

Տեխնիկական նիստի ժամանակ քննարկվել են հարկ վճարողների հարկերը ճիշտ և ժամանակին հայտարարագրելու, վճարելու պատճառները և դրդապատճառները, ինչպես նաև այն գործոնները, որոնք ազդում են հարկերը կամավոր վճարելու հարկ վճարողների մոտիվացիայի վրա:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված և քննարկված հարցերը՝

Առանձին կարճատև հանդիպումներ են եղել Հարկային մարմինների ներեվրոպական կազմակերպության ղեկավար պրն. Մարկ Բագնոնի հետ, ինչպես նաև Հարկային մարմինների ներեվրոպական կազմակերպության անդամ այլ երկրների ներկայացուցիչների հետ, որոնց ընթացքում ձեռք են բերվել պայմանավորվածություններ հետագա համագործակցության վերաբերյալ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Ադմինիստրատիվ նիստի ընթացքում հաստատվել են Կազմակերպության 2021թ.-ի գործողությունների և ֆինանսական հաշվետվությունները, 2018-2022թթ. ռազմավարության իրականացման զեկույցը, ներքին աուդիտորների 2021/2022թթ. զեկույցը, 2023-2027թթ. ռազմավարության նախագիծը, Կազմակերպության կանոնադրության մեջ համապատասխան

փոփոխությունների փաթեթը: Ընտրվել է Հարկային մարմինների ներեվրոպական կազմակերպության վարչական խորհրդի 2022/2023թթ. կազմը:

Տեխնիկական զեկույցի ընթացքում անդամ երկրները համաձայնության են եկել գործել թափանցիկ և կանխատեսելի, հարկային վարչարարության ընդհանուր ռազմավարության մեջ ներդնել հարկ վճարողների կողմից հարկային համակարգի բարեփոխման նկատմամբ վստահության ամրապնդման համար անհրաժեշտ տարրեր՝ եկամուտների կայուն աճի հասնելու համար, ապահովել հարկատուների և հարկային մարմինների միջև փոխըմբռնումը և արդար վերաբերմունքի ընկալումը, խթանել վստահությունը հարկային մարմնի նկատմամբ:

Բացի այդ համաձայնության են եկել, որ հարկ վճարողների համար նորարական էլեկտրոնային ծառայություններ նախագծելիս կարևոր է նախագծման գործընթացում կիրառել օգտատերերի կարծիքը, համագործակցությունը և տեղեկատվության փոխանակումը այլ պետական մարմինների հետ կարող են արդյունավետ գործիքներ լինել հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների որակի բարելավման, ինչպես նաև հարկային մարմինների առջև ծառացած այլ խնդիրների լուծման համար:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Ադմինիստրատիվ և տեխնիկական նիստերի ընթացքում կայացված որոշումները շարադրված են 8-րդ կետի ներքո:

Բացի վերոնշյալից, որոշում է կայացվել որպես հաջորդ՝ 27-րդ նիստի թեմա սահմանել «Միջազգային հարկային համակարգի և հարկային վարչարարության վերափոխում»:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Jul 4 2022 6:14 PM
Ashot Muradyan

04.07.2022թ.